

— Չուրը թերեւս ջիշ մը պաղ ըլլայ, իշխանուհիս : Թո՛ղ Ալլահը պաշտպանէ զքեզ :

Աղջիկը ցնցուեցաւ, աչքերէն կայծակ կը ցայտէր . շիտկուեցաւ գոռգարար և թքաւ երեսը :

Միւսը շփոթեցաւ վայրկեան մը, ապա ապտակի հարուածով մը փոխարինեց :

Աղջիկը զգուանօք գլուխը շարժեց և ցած ձայնով .

— Կազովրեցի՛ . — ըսաւ, և անխռով նորէն թքաւ երեսը :

— Գրո՛ղը տանի զքեզ, — պոռաց մարդը փատղած, դառնալով իրեններուն :

Կաւաստիները զայրացած մէկմէկու նաւեցան .

- Հաւատքը նախատե՛ց :
- Հայհոյե՛ց :
- Պէտք է վրէժ առնել :
- Գողօշի նման գամենք զինքը կամուրջին :

— Տանջելու է. շուտ պողպատէ գաւազանները :

— Մովուն յատակը նետենք, թող մկնէրը կրծեն գինքը :

Մովակալը կրկնեց հրամանը .

— Մովը նետեցէք, շուտ, գիշեր է :

— Մովը, — կրկնեցին սպայները հրամայողական ձայնով և ամենէն աւելի կատրճանները մէկդի հրկով :

Հարկ էր հնազանդիլ : Երկու ջղուտ անձինք վերցուցին կինը ոտքերէն և ուսերէն, հանեցին նաւուն բարձր տեղը. ամենքը նաւուն եզերքները վազեցին դիտելու համար :

— Ինքզինքդ Մատանային մօրուքին յանձնէ, — ըսաւ ծաղրելով ծեր թիավարութեան դատապարտեալ մը :

— Ալլահը զքեզ պատէ, — պոռացին շատերը միասին հեգնելով :

— Ո՛հ . . . հո՛փ . . . — ըրին մարմինը վերցնող ջղուտ մարդիկը :

Մարմինը գեղեցիկ կոր գիծ մը գծեց օդին մէջ և ինկաւ ջուրը. այն ապիտակ մարմինը վայրկեան մը դեռ երեւցաւ սեւ

ալեաց վրայ, և ապա աներեւութացաւ ծովին խորը :

Սպանիացիք աղմուկով հեռացան, տրժգոհ որ շուտ ըննցաւ :

Գիշերուտն աստուածային խաղաղութիւնը մեղմօրէն կ'իջնէր ցուկանաւորուն և հանդարտ ծովուն վրայ :

Տոն փապլուս Ամէշլա աչքերը սեւեռած շողշողուն աստղի մը վրայ, կը տեսնէր, իբր յերազի, Պարչէլլունայի բազմամօրիս հրապարակի մը մէջ, կախաղաններու գեղեցիկ շարք մը, և անոնց վրայէն խեղդով մը կախուած ապստամբներուն դիակները :

ՄԱՐԻՑ ՍՈՊՐԵՐՈ



Գ Ա Ս Զ .

Բ Ժ Ե Կ Ը Դ Պ Ը Ո Յ Ի Ն Մ Է Զ

Գպրոցական Առողջապահութեան դասերուս վերջը, կարեւոր կը կամարիմ ներկայացունել նաեւ, «Առողջապահութիւն Ազգ. վարժարաններու» անունով կարգ մը գրուած թիւններս, զորս հրատարակած եմ երբեմն¹, Ազգ. կենդրոնական վարչութեան Ուսումնական Խորհուրդին Ատենակապեւ եղած ժամանակիս սկիզբը, և որոնք՝ զուրկ չըլլալով այժմէութենէ, կրնան՝ մինչև իսկ դատախօսութիւններուս վեցերորդը նկատուել :

Ուսումնական Խորհուրդը՝ 1897ին իբր Օրակարգի խնդիրներուն կարեւորագոյնը համարեց կ. Պոլսոյ Ազգային վարժարաններու Առողջապահութիւնը, երկար խորհրդակցութիւններ կատարեց այս մասին և պաշտօն ինձ յանձնեց², որպէս զի՝ մասնաւոր հրահանգ մը պատրաստեմ վարժաւ

1. Տես «Բիւզանդիոն», «Մասիս» և «Ճերմուէի շարքը» Օրակարգերու 1897 աւարտին Մարտ-Մայիս ամիսներու թիւերը :

2. Տես Համաստութիւնց Արժանագրութեանց Ուսումնական Խորհրդոյ («Բիւզանդիոն» թիւ 76 և «Մասիս» թիւ 59, 1 Փետրվարի 1897) :

բաններու առողջապահութեանն յատուկ ։
 Ինձ վստահուած պաշտօնին առթիւ ,
 պատրաստեցի հետեւեալ երեք գրութիւն-
 ները, զորս կարգացի Ուսումնական Խոր-
 հուրդի՝ 1897 Փետրվար 7, Մարտ 14,
 Մարտ 22 նիստերուն մէջ ։

Նոր սրբագրութիւններով մըն է որ մէջ
 կը բերեմ հոս զանոնք ։

Ա.

Յարգոյ Պաշտօնակիցներս,

Ուսումնական Խորհուրդս իր 1897 Յու-
 նուար 31ի զումարումին մէջ, ինձ յանձ-
 նեց մայրաքաղաքիս Ազգ. վարժարաննե-
 րու մէջ գործադրելի առողջապահական
 կանոններու հրահանգ մը պատրաստել, և
 ներկայացնել զայն այսօր, որպէս զի ըստ
 այնմ կարեւորն յանձնարարուի թաղական
 Խորհուրդներու և հոգաբարձութեանց ։

Սիրայօժար յանձն առի ինձ եղած խիստ
 պատուարեք առաջարկութիւնն, որուն պա-
 տասխանը կը բերեմ Ձեզ ահա ։

Նոր չէ որ կը յուզուի Ազգ. վարժա-
 րաններու Առողջապահութեան խնդիրը .
 հրապարակային գրութիւններու շատ և
 շատ անգամ նիւթ եղած է այն ։ Հին Ու-
 սումնական Խորհուրդներ քանիցս լուրջ
 Խորհրդածութիւններու ստարկայ ըրին
 զայն և պատրաստեցին իսկ առ այս զա-
 նազան Հրահանգներ, որոնք դժբախտա-
 բար ո՛ր և է գոհացուցիչ արդիւնք չար-
 տադրեցին, և մեր վարժարաններն իրենց
 ամենատիւր յետադիմութեան հետ, ունին
 դեռ նաեւ առողջապահական խիստ աննա-
 խանձելի վիճակ մը ։

Պատեհ առիթն էր արդեօք այժմ, յու-
 զել կրկին այս հարցը, երբ մեր բազմա-
 կարօտ վարժարաններն հիմնական բարե-
 կարգութեան մը անհրաժեշտ պէտքը մեզ
 կզգացնեն, երբ մեր ուսումնաստեղ ման-
 կերին առողջապահական հրահանգներէ ա-
 ւելի հմուտ ու կարող դասատուներ, դաս-
 տիարակներ կը պահանջէ և օրինաւոր

դասագիրք, մանկավարժական ընտիր մէ-
 թոտներ կը խնդրէ նորակազմ Ուսումնա-
 կան Խորհուրդէս ։

Առողջապահական հրահանգներ պա-
 տրաստել շատ դուրին է, բայց ներուի ինձ
 ըսել, թէ՛ շատ դժուարին է զանոնք ըղձա-
 ցուած նպատակին հասցնել, եթէ՛ բժշկա-
 կան աշակուրդ և խղճամիտ հսկողութիւն
 մը ինքնին չվարէ անոնց գործադրութիւնը ։
 Թուղթի վրայ միայն կը մնան անոնք իբրև
 մեռած սառեր, և բնաւ երբէք ազգեցու-
 թիւն մը չեն ունենար ։

Տարիներ առաջ զբաղած եմ ես մեր
 վարժարաններու առողջապահութեամբ, ու-
 բուն մատուցած իսկ եմ փորձրիկ ծառա-
 յութիւն մը, ո՛չ թէ սակայն հրահանգներ
 գրելով, այլ գործադրելով դրական միջոց
 մը, զոր կուզեմ հաղորդել Ձեզ այսօր ։

Ներեցէ՛ք ինձ կարգաւ Ձեզ նամակ մը,
 զոր գրեթէ 11 տարի առաջ, 1886 յու-
 նիս ¹⁵/₁₇ին ուղղած եմ, Իսկիւտարի Ազ-
 գային երեք վարժարաններու Հոգաբար-
 ձութեանց ։

Ահաւասիկ այն .

«Յարգոյ Հոգաբարձու Տեաքք,

« Բժշկապէս հաստատուած ըլլալով, թէ
 « կարգ մը հիւանդութիւններ, տարափո-
 « խիկ կամ այլակերպ, կը պատրաստուին
 « երբեմն և ծնունդ կառնեն զպրօցներու
 « մէջ, երկար ատենէ ի վեր լիւրտպայի
 « մէջ, վարժարաններու հսկող խնամակա-
 « լութեանց հետ, թերեւս և առաջ, կըն-
 « տրուի բժշկական մարմին մը, միշտ
 « աշակուրդ հսկողութեան ենթակայ առ-
 « նելու վարժարաններու ներքին առող-
 « ջապահութիւնը, որպէս զի՝ մանուկներու
 « բարոյական այդ վսեմ օրրանը զերծ
 « ըլլայ և չվտանգի երբէք այլևայլ ախ-
 « տերու սերմերէն ու թոյներէն, զորս
 « կարող է ցանել կամ տածել, աշակերտ-
 « ներու առօրեայ երթեւեկութիւնն, և
 « բազմերամ համախմբիլը մէկ յարկի
 « ներքեւ ։

« Դժբախտաբար, մեր թաղային վար-
 « ժարաններուն մէջ բոլորովին զանց առ-
 « նուած է այս կարեւոր կէտն և հագիւ

« մէկ կամ երկու վարժարան, այն ալ
« մասնաւոր, ունին բժշկական հսկողու-
« թիւն:

« Բժշկական ասպարէզիս մէջ, հոս ան-
« ձամբ փորձառու ըլլալով մերթ ընդ մերթ
« վերոյգրեալ տողերուս ճշմարտութեան,
« զգալով մեր թաղային վարժարաններու
« այդ մեծ թերին, չսպասելով երբէ՛ք, որ
« Ազգային Վարչութիւնն օր մը պաշտօ-
« նապէս ուշադրութեան առնէ զայն, որ
« երկար գրութիւններու և օգտակար վե-
« ճարանութեանց նիւթ է այսօր Եւրոպա-
« յի, մանաւանդ Պրանսայի մէջ. անձ-
« նախարար կը դիմեմ ես ահա Յարգոյ
« Հոգաբարձութեանդ, խնդրելով թոյլ-
« տուութիւն, որպէս զի կարող ըլլամ ա-
« մէն Երեքշաբթի այց ելնել Երկսեռ վար-
« ժարանիդ, իմովսանն հսկելու ա-
« նոր առողջապահական պահանջներուն:
« Յուսով՝ թէ իմ այս առաջարկն ըն-
« դունելի պիտի ըլլայ պատկառելի Հո-
« գաբարձութեանդ, որ արդէն այնչափ
« հոգ ունի և խնամք իր հսկողութեանն
« յանձնուած վարժարաններուն յառաջա-
« դիմութեանը.

« Կը յայտնեմ կանխաւ իմ անկեղծ
« շնորհակալութիւնները,
Իսկ. ¹⁵/₁₁ յունիս 1886

Տօքթ. Վահրամ Յ. Թորգոմեան

Այս նամակէս դիւրին է կարծեմ հե-
տեցնել իմ այն համոզումս, թէ՛ մեր
վարժարաններու մէջ առողջապահութիւնը
բժշկական հսկողութեամբ միայն կարելի
է կանոնաւորել, ո՛չ թէ հրահանգներ զրի
առնելով, և յանձնարարելով զանոնք թա-
ղական խորհուրդներու կամ հոգաբարձու-
թեանց:

Կ. Պօլսոյ մէջ գտնուած 45 կամ 46
թաղային վարժարաններն առողջապահա-
կան միօրինակ հրահանգներու ենթարկել
բնաւ երբէք կարելի չէ. զի անոնց ամէն
մէկն առանձին առանձին կը պահանջեն
սարքեր հրահանգներ, զորս կը ցաւիմ ը-
սելու, թէ՛ ո՛չ կարողութիւնս կը ներէ պա-

տրաստել, ո՛չ ալ ժամանակս: Իմ առա-
ջարկութիւնս 1886 թուականին շատ շու-
տով և սիրով ընդունեցին Իսկիւտարի
հոգաբարձութիւններն, որոնցմէ ճեմարան-
վարժարանինը, ո՛չ միայն քաջալերական
գրեւով՝ ինձ ձեռնտու ըլլալ խոստացաւ,
այլ և՛ քանի մը ամիս վերջն ալ հրատարա-
կութեան տուաւ նամակս, զոր կը կարգայի
« Արեւելք » օրագրին 846^ր թիւին մէջ:

Նամակս հրատարակելով, «Արեւելք» իր
կողմէն կը գրէր նաեւ քանի մը տող, ու-
րով՝ մայրաքաղաքի Հոգաբարձութեանց ու-
շադրութիւնը կը հրաւիրէր իմ առաջար-
կութեանս վրայ (տես « Արեւելք » թիւ
846, 29 Հոկտեմբերի 1886): Արեւելքի
ձայնին ո՛չ ոք լսող չեղաւ, մինչեւ որ
1888ին՝ համարուեստ բարեկամս, ներ-
հուն բժիշկ օտքթ. Յ. Թիրեաքեան ըն-
տրուելով Ատենապետ Ազգ. Ուսումնական
խորհուրդին, իր գործառնութիւններուն ա-
ռաջինն բրաւ հրաւէր կարգաւ թաղական
խորհուրդներու, որպէս զի իրենց յանձ-
նուած վարժարաններուն համար որոշեն
(վճարելով) մէկմէկ բժիշկ:

Սակայն ես շատոնց սկսած էի իմ
բժշկական այցելութիւններս, զորս դեռ եւ

1. Այդ նամակներն մեր հրատարակուած է և է հետեւ-
եալը.

Իսկիւտար 3 Հոկտ. 1886

« Հոգաբարձութիւնս կը փութայ յանուն թաղեցոց
« իւր կիս շնորհակալութիւններն յայնանի զիջիս ճար-
« տար բժիշկներն Մեծ. օտքթօր Վահրամ էթ. Թոր-
« գոմեանի, որ անձեռնդրաբար մի քանի ամիսներէ ի
« վեր շարժած մի անգամ ճեմարան երկսեռ վարժարան
« այցելելով՝ կը հսկէ վարժարանես առողջապահական
« վիճակն վրայ և երկսեռ աշակերտաց մէջ երբեքն զրու-
« նուած տկարներն ալ կը փութայ ինամել: Այսպիսի
« անձնուիրութիւն մը այնչափ ատուել գովելի է, որ-
« չափ ի նկատ անուիք թէ յիշեալ Մեծ. օտքթօրն ինք-
« նայորդօր փութացած է այն մարդասիրական գործոյն
« ձեռնարկութեան, որն որ իւր ազնիւ և մարդաւեր
« զգացմանց մի բուցարձակ արտայայտութիւնն և պատ-
« կերն կը համարուի. հետեւագէս ամբողջ մեր թաղեց-
« ւոց շեմ ճամակաւորն առ ինքն գրակելով՝ նոցա շնոր-
« հակալեաց վրայ ալ մեծ իրաւունք ստացած է:

Ի դիմաց ճեմարան երկսեռ վարժարանի
Հոգաբարձութեան
Յակօր Յ. Հանեան

Տես «Արեւելք» Գ. տարի թիւ 825, ⁴/₁₆ Հոկտեմ-
բեր 1886:

բեր տարի առաջ կը շարունակէի, իւսկիւտարի Ս. Խաչի երկսեռ վարժարաններուն մէջ:

Թէ ինչ կընէի ես իմ այցելութիւններով, հարկ է որ պատմեմ Ձեզ համառօտիւ, որով դիւրին կըլլայ իմանալ, թէ վարժարաններու առողջապահութիւնը, գրաւոր հրահանգներով է որ կ'ուղղուի, թէ բժշկական հսկողութեամբ:

— Այցելութիւններս ի սկզբան շատ դիւրին չեղան. քանզի հարկ եղաւ ինձ զոհել ամբողջ օրեր, և բոլոր աշակերտներն ու աշակերտուհիները, ինչպէս և ամբողջ պաշտօնէութիւնը բժշկական քննութենէ մը անցունել, տկարներն ու առողջները ճանչնալու համար:

(Ռիմաւոր պատուաստի վկայականը պարտատրիչ դրի, և պահանջեցի, որ Հոգարարձութիւնները նորեկ աշակերտ չընդունին, և դասատու կամ պաշտօնեայ չփոխեն, առանց զայն նախապէս իմ բժշկական քննութեանս ենթարկելու:

Եթէ վերամուտի ժամանակ էր, կը պահանջէի՝ որ վարժարան եկող աշակերտ և աշակերտուհիներուն բոլորն ալ ունենային ո՛ր և է բժիշկէ մէկ վկայական. վկայական՝ որ պիտի հաստատէր թէ պարապուրդի օրերուն մէջ անոնք հիւանդ եղած չէին, և թէ անոնց տուններուն մէջ ո՛ր և է տարափոխիկ հիւանդութիւն մը պատահած չէր:

Վարժարաններու ներքին մաքրութեանն համար օրէնք դրի որ աշակերտները և դասատուները փողոցի կօշիկներով սրահները չեւնեն:

Կը փափաքէի որ աշակերտներուն և աշակերտուհիներուն հագուստները կարելի եղածին չափ ըլլային մաքուր, գլուխին սանտրուած և եղունգներին կտրուած:

Կուզէի որ մանչերուն մազերը միշտ կարճ ըլլային, և եթէ տեսնայի երկայն մազեր, սափրիչ մը բերել տալով անմիջապէս կարել կուտայի:

Աղտոտ աշակերտը կամ աշակերտուհին իր տունն յղել կուտայի մաքրուելու:

Իր կամ իր մօտիկ զբացիին տունը տա-

րափոխիկ հիւանդութիւն ունեցող աշակերտը կամ ուհին ժամանակ մը վարժարան ընդունել չէի տար:

Ռունգի կամ բերանի զարշահոտութիւն ունեցողներն, ինչպէս նաեւ մազերու կամ մորթի հիւանդութեամբ վարակուածներն, և վրդին ու ձեւքին վրայ վէրք, կուրծքի խժուկ, ականջի վազուկ ունեցողները ճամբել կուտայի, հարկ եղած դարմաններն յանձնարարելով:

Ջրագար, ջրային երեցողները, բթամիտներն, և շատ սրամիտները, ողնայարի ծոռութիւն ունեցողները, մինչև իսկ թոթովախօսներն և երգեցիկ մանուկները մասնաւոր ուշադրութեամբ կը հսկէի, և իրենց վիճակին պահանջած առողջապահական զոհէ ամենէն անհրաժեշտ միջոցները գործադրել կաշխատէի:

Պատուաստ չունեցողները կը պատուաստէի, և չորս հինգ տարիէ ի վեր պատուաստուածներն ալ կը վերապատուաստէի:

Տարափոխիկ հիւանդութիւններու համաճարակի ատեն, շարաթը գէթ մէկ կամ աւելի անգամ բոլոր ուսանողներուն և ուսանողուհիներուն կոկորդը, ըլիթն ու ականջը և կուրծքն ու բերանը կը քննէի, և հիւանդ գտածս անմիջապէս իր տունը կը յղէի:

Աչքի ցաւ ունեցողը շուտով ակնարոյժի մը խնամքին կը յանձնարարէի:

Մարմնամաքրութիւնն անհրաժեշտ ըրած էի, բայց կուտայի մասնաւոր հրահանգներ այս մասին. տղոց կազմուածքին զայն յարմար ընել կուզէի. կարգիլէի այն խաղերն ու մարզութիւնները, զորս վտանգաւոր կը համարէի կամ հակառակ առողջապահիկ օրէնքներու:

Կը ջանայի որ աշակերտներուն, մասնաւոր աշակերտուհիներուն մտաւոր աշխատութիւնները չափազանց և յոգնեցուցիչ չըլլային և կը պատուիրէի՝ որ երգ, խաղ, պար, պոոյտ և հանգիստ ընդհատելիս յաճախ վարժարանին դասերը:

Պատիժ բուսած բանը, ինչպէս և ծեծը, իրրիւ յուզիչ և զրգոխ մանուկներու ջղա-

յին դրուժեան, և իրրու վիրաւորիչ ա-
սոնց դեռ մատղաշ կազմութեան, բոլորո-
վին արգիւած էի, և անոնց տեղ առատ
առատ վարձատրութիւններ աստիճանաւոր
պատիւներ սահմանել տուած էի, աշա-
կերտներու սիրտն ու հոգին ուրախ առ-
նելու և զուարթ պահել տալու համար:

Կը պահանջէի, որ աշակերտներն ու
ուսիները ցորեկը լաւ ճաշ մը ընեն, տաք
կերակուր մը ուտեն. և անոնք՝ որ աղ-
քատիկ էին և ցամաք հացով շատ անգամ
կը կշտանային, կաշխատէի որ սեղանա-
կից օնել տամ կարողագոյններու:

Կերակուրէ յետոյ ամէն ոք պարտա-
ւոր էր լուացուիլ և բերանն ու ակոսյ-
ները մաքրել ու ցողուել ջրով:

Թոյլ չէի տար որ ճաշէն անմիջապէս
յետոյ աշակերտներն ու ուսիները զքո-
սանքի ելլան, և ստամոքսին կեցուն, և
վազեն վազվառեն ու ջրտնիմն կուզէի՝ որ
ստնուազն գոնէ ժամ մը հանգիտ ընէին,
ազատ մտային և մարմնային յոգնութիւն-
ներէ, և միայն խօսակցութիւններով ժա-
մանակ անցնէին:

Չքօսանքի ամենայարմար ժամն էր ըստ
իս, առաւօտն և երեկոյն:

Եթէ դպրոցը պարտէզ չունէր՝ կստիպէի
որ մանուկներն առաջնորդուէին մօտակայ
դաշտ մը, որպէս զի հոն ազատ օդի մէջ
արձակ համարձակ, ուզածնուց պէս վազեն
վազվառեն, խաղան, պօտան, կանչվառեն:

Չքօսանքէ յետոյ ջրտնած ջրտնած ջուր
խմելը բոլորովին արգիւած էի:

Վարժարաններուն ըմպելի ջուրը շա-
բունակ աչքէ կանցունէի. կուզէի որ ըլլար
այն մաքուր, յստակ, անոյշ և առ այս
կը ջանայի ամեն կարելիութիւն ի գործ
դնել:

Դասարաններու կամ սրահներու պա-
տուհանները դասերէ վերջն անմիջապէս
բանալ կը յանձնարարէի, և կը պահան-
ջէի՝ որ ազատի ժամանակէն վերջն ալ
գիշերն ի բուն բաց թողուին անոնք:

Վարժարանի սանդուխներուն վրայ,
ինչպէս և սեղանատունին կամ դասա-

սրահներու անկիւնները թքնելն արգիւած
էի խստու:

Արգիւած էի դասատուներուն ծխել դա-
սի ժամանակ, և աշակերտներու կամ ա-
շակերտուհիներու ներկայութեանը:

Հիւանդկախ, հազ ունեցող, արբեցող,
ծխող, մոլի պաշտօնեայներուն թոյլ չէի
տար պաշտօնավարել:

Չանձրացուցիչ ու քնաբեր, անկարող
դասախօսները, անոնք՝ որ իրենց դասա-
ւանդութիւններն հաճոյական առնելու և
զանակը չգիտէին, ինչպէս նաեւ՝ անբա-
բոյական, բարկասիրտ, կոշտ և խստա-
բարոյները հակառողջական համարելով, կը
պահանջէի՝ որ ճամբուէին շուտով:

Տնտեսներու առողջական վիճակն ալ,
երբէք ուշադրութենէս չէի վրիպեցունէր,
և կուզէի՝ որ ասոնք միշտ մաքուր, ան-
ախտաւոր և համրոյր մարդիկ ըլլային:

Ուշադիր կ'ըլլայի որ սրահներուն և
դասարաններուն մէջ աշակերտ և աշակեր-
տուհի չափէն անելի թուով չիկեցունէին, և
կը պատուիրէի միշտ որ անոնք գրասե-
ղաններուն առջեւ նստին միշտ ուղիղ դիրքի
մէջ, զրեւն միշտ ուղիղ, կարգան միշտ ու-
ղիղ և այնպէս՝ որ լոյսը շարունակ ի-
րենց ձախ դին ունենան:

Գրասեղաններու ձեւերն ու բարձրու-
թիւնները դպրոցականներուն հասակին և
տարիքին համեմատական ընել կը ջանա-
յի, և կ'աշխատէի՝ որ հետզհետէ անոնք
առողջապահական նորագոյն պատուէրնե-
րու համաձայն շինուէին:

Մասնաւոր ուշադրութեանս առարկայ
ըրած էի արբունքի հասած մանչերն ու
աղջիկները. անոնց բարոյական վիճակին
և մարմնային զարգացումին կը հսկէի ա-
մենալուրջ կերպով և երբեմն ալ իրենց
հետ կը խօսէի պատանեկան հասակի
առողջութեան վերաբերեալ՝ կարեւոր հար-
ցերու վրայ:

Մովորութիւն ըրած էի գոնէ ամիսը
մէկ կամ երկու անգամ մանկական հա-
սակի առողջապահութեան վրայ ընդհա-
նուր դասեր խօսիլ, և զգացունել իրենց,

անձին ատողջապահութեան մեծ կարեւու-
րութիւնը:

Աշակերտներու մեկնելէն յետոյ սրահ-
ներուն և դասարաններուն մէջ նեխարգել
նիւթեր ծխել կուտայի, ինչպէս խունկ,
ծծուճ կամ այլ ծաղիկներ. և կը պա-
տուիրէի որ աւելածութիւնը կատարուէր
ատանց փոշի հանելու:

Վարժարանի տնտեսներն օրն երկու
անգամ, առաւօտ և ցորեկ, պարտաւոր
էին զրասեղաններու վրայ նստած փոշի-
ներն առնել քիչ թաց սպունգով. կոյա-
նոցներն ու միզանոցներն ստէպ ստէպ ա-
ռատ ջուր թափել, և հսկել միշտ անոնց
կատարեալ մաքրութեանը, մանաւանդ ան-
գարշահոտութեանը, որուն համար որոշած
էի հականեխիչ զանազան դեղեր դիրաւ-
գնի, ինչպէս կիր, (քլօթիտ տր շօ) և այլն:

Շարաթը մէկ անգամ ամբողջ վարժա-
րանն իր ձեղուններով լուալ և մաքրել
կը պատուիրէի, և կը պահանջէի՝ որ տա-
րին գոնէ մի անգամ վարժարանին ներսը
նոր ներկուէր. սակայն զժրգողաբար՝ կա-
րելի չէր ըլլար այս, ինչպէս նաև կա-
րելի չէր ըլլար կատարել տալ այն ամէն
փոփոխութիւնները, զորս կ'առաջարկէի
չէնքերու ճարտարապետական պակասու-
թիւններէն կամ տձեւութիւններէն թե-
լադրուելով:

Կը պահանջէի որ ձմեռը սրահները
տաքնային փայտի ջերմոցներով և ո՛չ թէ՛
ածուխի վառարաններով, որոնց ազետա-
բեր վնասներն յայտնի են աշխարհի:

Վարժարանին ընդհանուր հսկողը կամ
դաստիարակն ինձ ընկեր առնելով, զայն
ատողջապահական յանձնարարութիւննե-
րուս կը վարժեցնէի տակաւ, և ուրախու-
թեամբ կը տեսնէի որ իմ այցելութիւններս
աւելի եւս արդիւնաւոր, աւելի եւս յաջող
կըլլային:

Աւելորդ է ըսել, որ յանձնարարութիւն-
ներս միշտ բոլորովին կը տարբերէին
վարժարանէ վարժարան, և պարագայնե-
րու բերամար, երբեմն տարւոյն եղանակ-
ներուն հետ կամ տիրոջ հրահանգութիւննե-

րու սաստկութեան աստիճանին համեմատ,
կը կրէին զանազան փոփոխութիւններ:

Եւ իմ ամէն այցելութեանս՝ կը պա-
տահէր ինձ ընել այնպիսի նորանոր յանձ-
նարարութիւններ, զորս եթէ ուզեմ դեռ
զրի առնել, հարկ կըլլայ ինձ յորինել կա-
տարեալ հատոր մը: Ներքեցէր ինձ ուրեմն
ընդհատել թշկական այցելութիւններուս
պատմութիւնը, որ թէեւ չունի կապ և կա-
նոնաւոր կապակցութիւն ու ամբողջութիւն
նիւթի, բայց բաւարար է կարծեմ ակննե-
րեւ հանելու, թէ՛ որչափ կարեւոր է
թժիշկի անմիջական ու մտօրի հսկողու-
թիւնը զպրօցներու ատողջապահութեան
գործին մէջ:

Բժիշկը վարժարանի մը համար ան-
հրաժեշտ պէտք մըն է. այս մասին Պա-
րիզեան վարդաբի ընկերներէս տօքթ. Վա-
հան Արծրունի, այժմ նշանաւոր թժիշկ
Տփիսիսի մէջ, իր «ՊՈՐՏԱԿԱՆ ԱՌՈՂՋԱ-
ՊԱՆՈՒԹԻՒՆ» անուն ընտիր երկասիրու-
թեան մէջ կըգրէ.

- « Կենց մի քանի անգամ յայտնել ենք այն միտքը
« Թէ թժիշկն անհրաժեշտ անգամ պիտի լինի ուսումնա-
« րանի հոգաբարձու մարմինը: Այս միտքն, որ այսօր բա-
« ւական արածործուած է և դաշարել է մեզ զարմացնե-
« լուց, իրագործուելու վրայ է իրարպայում և նոյն իսկ
« իրուսասանում: Այդ պահանջով են ո՛չ միայն մեր
« տեղեկութիւնները զպրօցական ատողջապահութեան
« սին, այլ և դրական մանկավարժութիւնը: »
- « Ինչ ճշմարտ որ, զպրօցական ատողջապահութիւնն,
« ինչպէս մենք սեռանք, լիբաւականանում զպրօցի շէն-
« քի ուսումնարանական պարագայների անշարժարժութիւն:
« Ներով, երկխոսների ֆիզիկական զարգացումով զբա-
« զուելով, — նա իրարքուր է նոյնպէս և դասական պի-
« տայքների, մանկան մասուր յոգնածութեան, պարա-
« պելու ձեռի մասին խօսելու իրաւունքը, մի իօքոզով
« նա ընդդրկում է նաև առ երեսու զուտ մանկավարժա-
« յութեան խնդրներ: Այսօր թժիշկը և հիգիենիստը (ատող-
« ջարքան) իրաւունք են համարուել իրանց միջմտեւ զա-
« ստատութեան ձեռի որոշման մէջ, դասերի բաժանման,
« դրութեան ձեռի, դասերի տեղութեան, քննութիւնների
« եղանակի և ուրիշ այսպիսի խնդիրների լուծման մէջ,
« որոնք մինչև այժմ միայն մանկավարժի հայեցողու-
« թեանն էին թողնուած »:

Լսելով այս կարեւոր տողերն որք դեռ
անցեալ տարի լոյս տեսան Տփիսիսի մէջ,
դուք անշուշտ կը զգաք թէ՛ որչափ մեծ
է թժիշկի դերը վարժարանի ատողջապա-
հութեան մէջ. ուստի կառաջարկեմ որ
ատողջապահական հրահանգներ խմբագրե-
լէ աւելի, աշխատինք ու գուն զործենք՝

ՅՈՎՀ. ՊՐՈՒՍԱՅԻ

Տ Է Ր Յ Ե Ն Ց

որ մեր ազգ. վարժարաններն անպատահառ ենթակայ ըլլան բժշկական օրինաւոր հսկողութեան, ինչպէս կը պատուիրէ արդէն մեր «կազմակաւ կանոնագրի» ԼթԻՐ՝ յօդուածը:

Բժիշկին աչքը միայն կրնայ տեսնել վարժարանին առողջապահական մանրամասն թերութիւնները. բժիշկը միայն կըրնայ որոշել ինչ որ օգտակար է հոս, ինչ որ հոն ֆիասակար:

Եթէ ունինք նպատակ ազօգուտ գործ մը կատարելու, ջանանք ընել զայն հիմնաւոր, և ո՛չ թէ հարեւանցի կերպով: Այսօրուքն ուրեմ որոշենք, որ մեր թաղային վարժարաններն ենթարկուին բժշկական հսկողութեան, որոշենք զայս և զոր ծաղրենք, ո՛չ թէ թաղական խորհուրդներու միայն գրելով և հրամայելով, ինչպէս ըրաւ 1888ի Ռուսիական Խորհուրդը, և բնաւ արդիւնք մը ձեռք չբերաւ, այլ ուղղակի զիմելով պատուարման հայ բժիշկներու մարդասիրութեան և անձնուիրութեան:

Մը հայ բժիշկն է, որ ունկնախից պիտի մնայ այսպիսի կարեւոր հրաւերի մը, որ հայ բժիշկն է, որ չպիտի փափաքի իւրովսանն օգտակար հանդիսանալ Ազգային վարժարանի մը կանոնաւոր առողջապահութեան, որուն նպատակն է՝ մեր զաւկներուն միտքն ու մարմինն առողջ վիճակի մէջ զարգացունել, և այդպէս՝ ընդհանուր մարդկութեան պատրաստել, ապագայ առողջ հայրեր ու մայրեր, ապագայ անախտաւոր սերունդներ:

Խնդրենք ապա, հայ բժիշկներէ ստանձնել մէկ մէկ վարժարան, և ահա այլ եւս տեղի չիմնար առողջապահական հրահանգներ գրելու: Բժիշկները գիտեն իրենց ընկիւրը, հերիք է որ կոչուամ ընենք իրենց:

Վ. ԹՈՐՆՈՍԵԱՆ



Մըմբերան մը իր վանական համբերատութեամբ՝ կրնար տալ պատմութիւնը Տէրոյնցին: Նշանաւոր հանճար մը, որ հըմուտ է, և շատ գրած, բայց և միանգամայն զուրկ գեղեցիկ դպրութենէ. Տէրոյնցի սիրած է քաղել գիտութեան ծափն պտուղը, իսկ ծաղիկը զինքը բնաւ հիացուցած չէ: Չեն գիտեր իրօք՝ թէ գրասէր և քննասէր Մըմբերանը Տէրոյնցի մէջ աւելի սո՛ւրբը՝ թէ մատենագիրը ուզած է պրպըտել. գուցէ երկուքն ալ միասին. ու եթէ Տէրոյնցի Արմաշու վանքին մէջ յաջողէր մնալ, և դառնալ վարդապետ կրօնաւոր մը՝ Մըմբերան իր այս հատորով երկրորդ նարեկացի մը պիտի ստեղծէր: Արշալոյսը Տէրոյնցին հրաշապատում է, մայրը զայն Պրոսայի յոյն գիւղակին Ս. Հրեշտակապետաց եկեղեցեակին ուխտի կը տանի. Տէլիճէ գետին զայրանալուն, իր նորահարս մայրիկը՝ զայն ջուրին միւս եզրը նետելով, կ'ըսէ. « Գուն պահէ, ո՛վ հրեշտակապետ »: մանկիկ Տէրոյնցի կը քնանար այդ վտանգաւոր օրօքն, և հրեշտակապետը զինքը պահած է. լաւ որ պահեր է, ժամանակուան հայ մատենագրութիւնը, մանաւանդ եկեղեցական և պարբերական մամուլը այդ անձին պարտական կը մնայ, յաւերժացնելու իր յիշատակը:

*

Գիտենք որ Մըմբերան խրոխտ է գրչու վը, միտքը ամպերէն վեր, անբմբռնելին մէջ աստուածային ցօղով կ'ոտոգէ, ու գերբնականին կը խոնարհի, երբ համուզուած է որ իր զիւցալը մարդ մըն է, գրական վեհութիւն. այդ համոզումը ունի Տէրոյնցի վրայ: Չայն կենսագրելով, կու տայ ուրուպատկերը անցեալ դարու թուրքիոյ հայութեան մտաւոր շարժումին: